Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» N 168-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը՝

1) որոշման 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11-րդ ենթակետով.

«11) պատվիրատուներն իրենց կարիքների համար կանոնավոր չվերթերով ավիափոխադրման ծառայությունների գնումներ կատարելու նպատակով կատարում են ավիափոխադրումների գնային առաջարկների համեմատություն www.govtravel.am միասնական կայքում իրենց համար հատկացված անհատական վավերապայմաններով հասանելի ավիատոմսերի վաճառքի միջազգային էլեկտրոնային հարթակում որոնման պահին առկա և անմիջապես ավիաընկերությունների կողմից գետեղված գնառաջարկների միջև (բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ ամրագրումը կատարելու օրն էլեկտրոնային հարթակը տեխնիկական պատճառով չի գործում 6 ժամից ավելի ժամանակահատվածի ընթացքում)՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ավիափոխադրման ծառայությունների գնման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները և ավիաընկերությունների գնառաջարկների միջև ընտրության չափորոշիչներ կիրառելու կարգի պահանջները:».

2) որոշման N 1 հավելվածի 25-րդ կետի 5-րդ ենթակետի 31-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	31. www.govtravel.am միասնական ինտերնետային կայքի օպերատորի հետ կնքված պայմանագրի համաձայն ավիատոմսերի գնում կամ բացառապես բանկային քարտերի կիրառմամբ ցանկացած ինտերնետային կայքից հրապարակային օֆերտայով առաջարկվող ավիատոմսերի՝ էլեկտրոնային եղանակով ձեռքբերում, եթե տվյալ ավիափոխադրումը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ավիափոխադրման ծառայությունների գնման գործընթացի կազմակերպման և ավիաընկերությունների գնառաջարկների միջև ընտրության չափորոշիչներ կիրառելու կարգի պահանջներին, և դրա արժեքն ավելի ցածր է օպերատորի կողմից նույն երթուղով գնանշված ավիափոխադրման արժեքից	»:

2. Հաստատել ավիափոխադրման ծառայությունների գնման գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները և ավիաընկերությունների գնառաջարկների միջև ընտրության չափորոշիչներ կիրառելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

3. «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» փակ բաժնետիրական ընկերությունը ճանաչել որպես www.govtravel.am ինտերնետային հասցեում զետեղված ավիափոխադրումների ծառայությունների գնման համար որոնողական էլեկտրոնային հարթակի օպերատոր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: